

“ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ”

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵՍՈՒՄԵՆԱԹԵՐԹ

ՅԲ. ՏԱՐԻ — 1938

Կը խմբագրուի եւ կը հրատարակուի

Մեխիթարեան Մեխիթարեան Կոլոնիան Ի Վիեննայ  
աշխատակցութեամբ ազգային եւ օտար թանասերներու:

Որպէս զի աւելի մատչելի դառնայ Ուսումնասիրքս  
օտարալեզու արեւելագէտներուն, խմբագրութիւնս շա-  
րունակաբար պիտի ներկայացնէ նաեւ կարեւոր բանա-  
սիրական յօդուածներուն համառօտ մէկ ամփոփումը,  
միջազգային որ եւ է լեզուաւ:

Բաժանորդագինն է ամէն երկրի համար՝  
1 ֆունդ ստերլինգ, կամ յիսկ:

Մեր հասցեն՝

REDACTION DE LA REVUE “HANDES AMSORYA,”  
VIENNE (Allemagne), VII., Mechitharistengasse 4.

“HANDES AMSORYA,”

MONATSSCHRIFT FÜR ARMENISCHE PHILOLOGIE

LII. JAHRGANG — 1938

Herausgegeben und redigiert von der

MECHITHARISTEN - KONGREGATION IN WIEN  
unter Mitwirkung zahlreicher Armenisten.

Um unseren nichtarmenischen P. T. Abonnenten  
die Benützung unserer Zeitschrift zu erleichtern,  
werden wir fortlaufend von den wichtigen philo-  
logischen Abhandlungen ein kurzes Resumé in einer  
europäischen Sprache geben.

Preis dieses Jahrganges £ 1.—.

Unsere Adresse:

Հ Ա Յ Ս Տ Ե Ս Ա Ր

Հ Ա Յ Ա Վ Կ Ո Վ Ե Ա Ն  
Ո Ւ Ե Ր Ժ Ա Ն Ի Ք Ն Ե Ր

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԹԻՒ

ԳՐԵՑ

Հ. ՍԱՀԱՎ ԿՈՎԵԱՆ

Մեխիթ. Ուիեննայ

ՎԻԵՆՆԱ

Մեխիթարեան ՏՊԱՐԱՆ

1938

80, էջ 108: Գինն՝ գուլից. ֆր. 2.50:

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱՎԿԻՏԱԿԱՆ ՌԵՍՈՒՄԵՆԱԹԵՐԹ

ԹԻՒ 4—8

ԱՊՐԻԼ—ՕԳՈՍՏՈՍ

ՅԲ. ՏԱՐԻ 1938

ՍԵՐԻՈՍԻ “ԺԱՄԱՆԱԿԱԿԻՐՆ”, ԵՒ Փ. ԲԻԻԶԱՆԻԵԱՅ  
Ա. ՊԱՏՄՈՒԹԻԻՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՌԵՍՈՒՄԵՆԱԹԻՒՆԻՆ ՀԱՅ ԱՐՇԱԿՈՒՆԻ  
ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

(Շարունակութիւն):

12. ԱԳԱԹԱՆԳԵՂԱՅ ԱՄԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՒՈՐԱՅՆ ՊԱՐԹԵԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ

Սերիոս, որ պահած է մեզի Ազաթանդեղոս գրչի Արձանա-  
գրութիւնը, կը յայտարարէ, թէ անոր բովանդակութիւնն է  
«ապստամբութիւնն Պարթեւացի Մակեդոնացուց եւ համար-  
ձումն Արշակունեաց թագաւորութեան»: Այս իմաստով ալ խորա-  
գրած է Արձանագրութիւնը. «Ապստամբութիւնն Պարթեւաց որ  
եղեւ ի յայս ժամանակի»:

Արձանագրութեան էական բովանդակութիւնն է սակայն «ամբ  
առաջին թագաւորացն Պարթեւաց եւ Հայոց». կը խոստովանի  
Սերիոս, թէ իւր ժամանակագիրը, որմէ կ'օրինակէ Արձանա-  
գրութիւնս, «եզիտ գրոշմեալ ի վերայ վիմի զամս եւ զաւուրս  
հինգ թագաւորացն Հայոց եւ Պարթեւաց». կը հաւատէ ինքնին  
Ազաթանդեղոս գրչի, թէ «գրեցի ի վերայ արձանիս այսորիկ  
իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն <Պարթեւաց եւ>  
Հայոց»: Որովհետեւ Սերիոս ի բանից ժամանակագրին կը շեշ-  
տէր, թէ «ամբ թագաւորացն Հայոց եւ Պարթեւաց» գրոշմուած  
էին արձանին վրայ, եւ բովանդակութիւնը առաւելապէս Պար-  
թեւաց արքայից կը հայի, պէտք է ենթադրենք, թէ կար հոն նախ-  
նարար «Պարթեւաց եւ Հայոց», ինչպէս լրացուցինք:

Նկատի առնուած են Արձանագրութեան մէջ Պարթեւ-արշա-  
կունի հարստութեան առաջին 110 տարիներու թագաւորները:

Ազաթանդեղոս գրչի ընծայած է հոս հակիրճ տողերու մէջ  
տեղի ունեցած պատմական որոշիչ պատերազմները, որոնք ճա-  
կատագրական եղան Պարթեւաց պատմութեան մէջ, տեղի ունե-  
ցած 250, 209 եւ 139 տարիներուն: Առ այս կարեւոր տեղեկու-  
թիւններն առած է «Ի Դիւանէ արքունի», այսինքն օգտուած է  
արքունի Մատենադարանին մէջ պահուած Յիշատակարաններէն:





Եւ յամի ժԱ. Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացոց 19:

Արշակ Ա. 250—248: Անտիոքոս Բ. Թէոս 261—246:
Արշակ Բ. Տրդատ Ա. 248—210: Մելիկոս Բ. Կալլիսիկոս 246—226:
Մելիկոս Գ. Կերաւոս 226—222:

3. Եւ թագաւորեաց Արշակ Մեծ [որդի արքային Թետալացոց] ի Բաճլ շահաստանի յերկրին 20 Քուշանաց. որում ամենայն ազգք արեւելից եւ հիւսիսոյ հնազանդեցան ի ծառայութիւն:

Արշակ Գ. Արշակ Բ. 210—191: Անտիոքոս Գ. Մեծ 222—187:

4. Չուեաց խաղաց զնաց Անտիոքոս 21 արքայն ամենայն զաւրաքն հանդերձ յԱրեւմտից 22 երթալ ի Բարեւոն՝ յառաջին թագաւորացն կալուածսն, զի անդ հաստատեցէ զթագաւորութիւն իւր: Եկն եհաս ի Բարեւոն:

Իսկ Արշակ 23 իրբեւ ետես, զի անչափ բազմութեամբ եկեալ հասեալ էր ի վերայ նորա Անտիոքոս 24 արքայն Ասորոց 24, այնուհետեւ ոչ կարացեալ վստահանալ յիւր զաւրացն բազմութիւն՝ ի զիմի հարկանել վերագին 25 այնմիկ 26, խոյս ետ յերեսաց նորա. փախեաւ եւ զնաց ի Բաիլ շահաստան 27:

Եւ թագաւորէ <Անտիոքոս> ի վերայ <Ասորոց եւ> Ասիաստանի ամս ԼԵ 28:

Եւ ապա մի ըստ միովէ թագաւորեն Մակեդոնացիքն յԱսիաստանի 29 ժամանակս ինչ:

Արշակ Գ. Փրիպատ 191—176: Մելիկոս Գ. Փիլոպատոս 187—175:
Արշակ Ե. Հրախատ Ա. 176—171: Անտիոքոս Գ. Եպիփան 175—164:
Արշակ Զ. Միհրդատ Ա. 171—138: Անտիոքոս Ե. Եպատոս 164—162:
Դեմետր Ա. Սոտեր 162—150: Ազիսամոս Ա. Բալաս 150—145:
Դեմետր Բ. Նիկատոս 145—140:

19 Ասիէ առեալ Մ. Սոր. Բ., 1. «Անտիոքոս ասացեալն Թեոս (տե՛ս Եւս. Քրոն. Ա., 345) ամս ժ. եւ ի ժԱ.ին ապստամբեն Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացոցն»:

20 WS յերկրին: Մ. Սոր. Բ., 2, որ կ'օգտուի զբուժենէս, հատածս յառաջ կը բերէ. «Թագաւորէ ի վերայ Պարթեւաց Արշակ Բաճ, ի քաղաքին որ կ'ընի Բաճը (տարբերակք՝ Բաճը) Առաւօտին (Ասորիկ 29, շահաստան), յերկրին Քուշանաց»:

21 WS Արշակ:

22 WS յԱրեւելից:

23 WS Անտիոքոս:

24 WS Արշակ արքայն Պարթեւաց:

25 Վիրազ հոս «մարդախոշոջ», «բռնաւոր» իմաստով զործածուած է պարթեւասէր հեղինակէն Անտիոքոսի համար. հմմտ. բառս դասականեցու քով, առ հասարակ «սպանող» իմաստով. «գտանէր զորդի վիրազիմ (մանկակոտոր Հերովդի) կենդանի». Ոսկ. Մատթ. Ա., 131: «Աստուած եմ ես առաջի վիրազացն քոց». Եղեկ. ԻԲ., 9 (յն. տօն ձնալըծոնտօն սե, սպանողացն քոց). «Երարձ Պաւղոս վիրազ գլուծ նորա». Ազաթ., 272:

26 S եւ խոյս ետ:

27 WS զնաց յԱսիաստան:

28 WS Ասիաստանու ամս Ե: Ուղղեցինք «ԼԵ», որ Անտիոքոս Գ.ի թագաւորութեան ամսի», այս ինքն միւսանդամ իւր տէրութեան հետ կը միացնէ Պարթեւեկէն զբաւուած երկրներն եւ այն (209)ին: «Ամս Ե» թերեւս համարուած ըլլաց հոս Անտիոքոս Բ.ի (261—246) թագաւորութեան վերջին տարիները, յետ ապստամբութեան Պարթեւաց, սկսեալ իր թագաւորութեան ժԱ. ամէն, զոր յիշեց հատուած 3:

29 WS Ասիաստանի ժամ.:

5. Եւ Արշակ արքայ հնազանդեցոյց ի ծառայութիւն զԱսորեստանեայս որ ըստ Անտիոքայ եւ զԲարեւոցիս եւ զՊարսիկս եւ զՄարս եւ զերկիրն Հայոց մինչեւ ցլեառն մեծ Կապկոհ եւ ցեղք 30 ծովուն մեծի Արեւմտից:

Թագաւորէ Արշակ ի Բարեւոն ամս բազումս:

6. Եւ եղեւ յամին ձժ 31. Արշակայ արքայի Պարթեւաց, ի Դ. ամի թագաւորութեան Դեմետրեայ ի վերայ Ասիաստանի եւ Ասորոց, մինչ 32 Արշակ արքայ զնայ յԱրեւելս՝ զաւրաժողով լեալ եւ Դեմետրիոս չորաւ կալաւ զԲարեւոյն 33: Իրբեւ ետես Արշակ 34, զի անչափ բազմութեամբ եկն եհաս ի վերայ նորա Դեմետրիոս 35, տեղի ետ նմա եւ զնայ մինչեւ ցԱնտիոք 36. Եւ անդ ճակատեցաւ ընդդէմ Դեմետրեայ 37 ի պատերազմ: Եւ եղեւ պատերազմ մեծ առ Անտիոք քաղաքաւ 38: Հարկանեն եւ սրբաջունջ 39 առնեն <զաւրքն Արշակայ> զզաւրսն 40 Դեմետրեայ. եւ ձերբակալ առնեն զԴեմետրիոս: Կապէ զնա Արշակ արքայ ոտիւք եւ ձեռաւք եւ առնու զնայ յԱրեւելս ի Բաճլ շահաստան 41:

Արշակ Ե. Հրախատ Բ. 138—128: Անտիոքոս Ե. Սիդեացի 138—129:
Դեմետր Բ. միւսանգամ 130—125:

7. Իրբեւ ետես Անտիոքոս եղբայր Դեմետրեայ, եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս ի ձեռս Արշակայ արքայի, ինքն թագաւորէ ի վերայ Ասորոց եւ Ասիաստանի:

Չաւրաժողով լինի եւ զնայ ի Բարեւոն զկնի ժ. ամի 42:

Ազդ լինի Արշակայ 43 եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմետրեայ եւ եկն ի Բարեւոն: Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի Դեմետրեայ եւ եկն ի Բարեւոն: Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի Դեմետրեայ եւ եկն ի Բարեւոն: Եւ Դեմետրիոս ոչ զնայ առ եղբայրն իւր ի Բարեւոն, այլ յԱսիաստան 45 անցանէ:

30 WS եւ ի յեր:

31 WS հարիւր եւ տասներորդի չորրորդի. կարգա՛ հարիւրերորդի եւ չորքառասներորդի: — Դեմետրեայ Բ. (146—140) Գ. տարին (140) կը համապատասխանէ Արշակայ թագաւորութեան ձժ. տարւոյն: Յաւելուածական «Դ» հաւանօրէն ծագած է Դեմետրեայ «Դ» տարիները գումարելով Արշակայ ձժ. տարիներու վրայ:

32 W մինչեւ:

33 W զԲարեւոն:

34 WS Դեմետրիոս զի այնչափ:

35 WS Արշակ:

36 Այսպէս WS. տե՛ս վարը:

37 WS Արշակայ:

38 Այսպէս WS:

39 Սրբաջունջ գտասականաց պլուստ անձանթ. անոնք կը սիրեն ըսել համաջունջ. «Խրատութիւն գհամաջունջ սասակումն կոչեն». Ոսկ. Մատթ. Ա., 108. «Ի համաջունջ ամենապատէրհեղեղէն». Ոսկ. Պաւլ. Բ., 138. Իսկ Եւս. Քրոն. Ա., 348 ունի անգամ մը «ամենայն համաջունջ սասակէր յեղիմացոց ճակատուն»: Ինձ կը թուի, թէ սէտք է թէ՛ համաջինջ եւ թէ՛ սրբաջունջ ուղղել եւ կարգալ համաջունջ:

40 WS զզօրն:

41 Արտաբիւք «ի վերկանս» կ'ըսեն:

42 Պէտք է լրացնել «զկնի ժ ամի» գերութեամբ Դեմետրեայ:

43 WS սորին:

44 Այսպէս WS:

45 Թերեւս սէտք է կարգալ «յԱսորեստան». Եւսեբ. ունի «յԱսորիս»:

Ապա խաղայ զնայ Անտիոքոս<sup>46</sup> ի Բարեւոնէ<sup>47</sup> ԺԳ բերու<sup>48</sup> յամի Ը.<sup>49</sup> Թագաւորութեան իւրոյ <եւ ի ձի ամի Թագաւորութեան Արշակայ>: Իբրեւ մաւա եղեւ ի Բարեւոն<sup>50</sup>՝ անկանի ի վերայ նորա Արշակ<sup>51</sup> յանկարծակի ի ձմերան<sup>52</sup> Ժամանակի, ի նեղ վայրի. եւ ոչ կարեն զաւրել<sup>53</sup> <զղէմ ունել յարձակմանն Անտիոքեանք. եւ Պարթեւք> սպառեն զգաւրսն<sup>54</sup> <Անտիոքայ>. զարկանեն եւ ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ եւ սպանանեն: Եւ ձերբակալ առնեն զՍելեւկոս զորդին Անտիոքայ. զոր ունէր, ասէ, արքայ ի դրանն իւրում Թագաւորաբար<sup>55</sup>:

Տ. Յայնմ Ժամանակի Թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ՝ Փոքր կոչեցեալ՝ ի վերայ աշխարհին<sup>56</sup> Հայոց ի Մծրին քաղաքի: Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրուստտան առ երկրաւն Տաճկաց եւ առ երկրաւն Ասորոց. եւ զԿապուտկիւս<sup>57</sup> առ Կիւղիկեաւ մինչեւ ցեղր ծովուն մեծի Արեւմտից. եւ ի<sup>58</sup> Հիւսիսոյ կողմանէ ցլեառն<sup>59</sup> մեծ Կովկաս<sup>60</sup>, որ ձգի ընդ կողմանս Արեւելից եւ անցանէ առ սահմանաւն<sup>61</sup> առ ամուր աշխարհաւն Մարաց եւ եւ հասանէ ի լեառն Չարասպ եւ անցանէ առ Նոր Շիրական<sup>62</sup> երկրաւն:

Եւ յուզարկէ զնա ի Մծրնայ<sup>63</sup> ընդ Արեւմուտս<sup>64</sup> զաւրու մեծաւ եւթանասուն հազարաց սպառազինաց եւ մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց, բիւրաւորաց. որում ոչ ոք կարէր զղէմ ունել պատերազմաւ:

Սմա ընդ առաջ ելանէր Բագարատն Փառաւաղեան յորդուցն Արամանեկայ<sup>65</sup>, նախարար մեծ, հանդերձ զաւրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի եւ արծաթ. եւ զարդարէ զնա ի սրնդր<sup>66</sup> եւ ի վակաս. պսակէ զնա ի Թագ հայրենի. եւ նստուցանէ զնա ի վե-

<sup>46</sup> WS Արշակ:  
<sup>47</sup> WS ի Բարեւոն:  
<sup>48</sup> W բերու. S բերովք:  
<sup>49</sup> WS յամի ձի Թագաւորութեան (W Թագաւորութեանն) իւրոյ:  
<sup>50</sup> ձգաւրսն պիտի ըլլար «ի Մարաց աշխարհն»:  
<sup>51</sup> WS Անտիոքոս:  
<sup>52</sup> EW ի ձման. S ի ձման: Ուղղեցինք «ի ձմերան». համար. «ի մէջ ձմերան ժամանակի»:  
<sup>53</sup> Բարդի վեցորեայք, 170:  
<sup>54</sup> Բնագիրը հոս աղճատուած է. լրացուցինք ըստ իմաստին:  
<sup>55</sup> WS զղորն:  
<sup>56</sup> WS Թագաւորին:  
<sup>57</sup> W աշխարհիս:  
<sup>58</sup> WS զԿապուտկեայ:  
<sup>59</sup> S եւ ց՛իւսիսոյ:  
<sup>60</sup> S ի լեառն:  
<sup>61</sup> Վերագոյն անուանեց լեոս՝ Կապիւհ:  
<sup>62</sup> «Առ սահմանաւն» հաւանորէն կարգաւոր է կամ «առ Ատրպատականաւ» եւ կամ «առ Մահաբանաւ»:  
<sup>63</sup> WS Նոր Շիրակ:  
<sup>64</sup> W ի Մծրնայ S Մրճանայ:  
<sup>65</sup> S ընդ յարեւմուտս:  
<sup>66</sup> WS Բագարատն Փառաւաղեան յորդուցն Արամանեկայ (S Արամանեկայ):  
<sup>67</sup> S սրնդր:

րայ ոսկիապատ ականակուռ գահոյից<sup>67</sup>. եւ տայ նմա զդուստր իւր ի կնութեան<sup>68</sup>:

Չսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին. որ էր իշխան եւ հրամանատար՝ ամենայն Թագաւորութեանն հրամանաց գլուխ, եւ հայր արքայի եւ եղբայր. որում ետ զիշխանութիւն<sup>69</sup> տէրութեանն այնորիկ:

Նա կոտորեաց զհսկայան, որ զաւրաժողով եղեն ի վերայ նորա ի Միջագետս Ասորոց:

9. Եւ այս են իշխանք Պարթեւաց, որք Թագաւորեցինն զկնի Արշակայ հաւր իւրեանց ի Բահլ շահաստանի յերկրին<sup>70</sup> Քուշանաց:

Որդիք չորք<sup>71</sup> ասեն լեալ Արշակայ արքայի Պարթեւաց. զառաջինն, ասեն, Թագաւորեցոյց Թեոալացուց աշխարհին. զերկրորդն ի վերայ Կիլիկեցոց<sup>72</sup>. զերրորդն ի վերայ Պարթեւաց. զչորրորդն ի վերայ<sup>73</sup> Հայաստան աշխարհի:

Եւ լինին ամենայն ամք Արշակայ Թագաւորութեանն ձև ամ<sup>74</sup>:

14. ՊԱՐԹԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԱՌԱՋԻՆ 120 ԱՄԵԱՅ ՇՐՋԱՆԸ

1. Ագաթանգեղոսի Արձանագրութեան այս «վերնագրի» մասին խօսեցանք վերագոյն (§ 5): Իսկ յաջորդ խորագիրը «Ապստամբութիւն Պարթեւաց...» առանց տարակուսի Սերբոսի յաւելուածն է:

2. Սելեւկեանց առաջին երեք Թագաւորներու անուններն առնուած են Եւսերբոսէս. ամբողջը խմբագրին յաւելուածը կ'երեւայ: Եւսերբոս (Բ. 226—228) այսպէս ունի.

«Ասորոց եւ Բարեւոնի եւ վերնոց կողմանցն Թագաւորեաց Սելեւկոս Նիկանովր ամս ԼԲ. Անտիոքոս Սովտէր ամս ԺԹ. Անտիոքոս Թէոլս ամս ԺԵ:

Ի ձևի ողորմագիրն յերրորդ ամի (250—249), ի ՌՉԿՁ ամի Արրահամու, ի ԼԴ ամի Պտղոմեայ Փիղաղեղփոսի, ի ԻԹ ամի Անտիգոնեայ Գոնատեայ եւ ի ԺԱ ամի Անտիոքայ որ կոչեցան Թէոլս, Պարթեւք ի Մակեդոնացուց ապստամբեցին. եւ ի նոցանէ Թագաւորեաց Արշակ, ուստի եւ Արշակունիք»:

Սկզբնագիրը հաւանորէն էր. «Եւ եղեւ յամի ԿԲ Աղեքսանդրի

<sup>67</sup> WS գահոյիցն:  
<sup>68</sup> S ի կնութիւն: Դասականք զիտեն «տայ ումեք զդուստր կնութեան», նաեւ «ի կնութեան»:  
<sup>69</sup> WS իշխանութիւն:  
<sup>70</sup> S ի Բահլ Շահաստան յերկրին:  
<sup>71</sup> W Դ որդիք:  
<sup>72</sup> Վարդան կը կարգայ «Լիւրիկեցոց»:  
<sup>73</sup> WS չունին «ի վերայ»:  
<sup>74</sup> S Արշակայ կենաց իւրոց ձև ամ. եւ Թագաւորեաց ամս ԾՁ:



մատենին մէջ երեւան կու գան<sup>6</sup>. այս պարագան ալ կը ստիպէ հաստատելու, թէ յաւելուածը Սերբոսի ընթերցողի մը կամ օրինակողի մը ձեռքէն եղած է:

4. Տրդատ Ա.ի յաջորդն եղաւ Արշակ Բ. 210—191:

Պարթեւք ամփոփուած էին դեռ իրենց անձուկ սահմանին մէջ, զոր կ'աշխատէին ամրացնել. ուստի եւ չէին կրնար յարձակողականի անցնիլ եւ յառաջանալ մինչեւ «Բարելոն»: Պարթեւներու օրինակէն քաջալերուած՝ խլրտած էին Սելեւկեանց դէմ Պարսկաստանի այլ եւ այլ կողմեր հաստատուած Սատրապութիւնք: Անտիոքոս Գ. Մեծ (223—187), որ 220ին արշաւած էր Մոլոնի դէմ, եւ ապստամբած նահանգները միւսանգամ իւր լուծին տակ նուաճած, 210ին ձեռնարկեց նոր արշաւանք մը Պարթեւաց դէմ: Նախ անցաւ Հայաստան, Արշամաշատի թագաւորութեան գործերն կարգի բերելու: Անկէ նաւեց Եփրատի վրայէն մինչեւ Տիգրոն: 209ին երեւցաւ Մարաց աշխարհը, յեկրատան: Անցած լայնատարած բանակի՝ 100.000 հետեւակի եւ 20.000 այրեւծիոյ գլուխ՝ քալեց Պարթեւաց վրայ: Կտրելով անապատը՝ հասաւ ի Հեկատոմպոլիս. Պարթեւք գիտնալով իրենց տկարութիւնը տեղի կու տային. եւ Անտիոքոս առաւ համարձակութիւնը Լարուս (այժմ Լարուս) լեռն անցնելով միջամուխ ըլլալ Վրկանաց աշխարհը: Արդէն յաղթած էր Անտիոքոս լեռն բարձրանալու դժուարութիւններուն՝ երբ յարձակեցան Պարթեւք ի կռիւ, արգիլելու անցքը: Բայց իրենց քաջութիւնը չզօրեց մակեդոնական պատերազմի գերագանց արուեստին: Անտիոքոս մտաւ Վրկանաց աշխարհը եւ պաշարեց Սիրիւնիա քաղաքը, ուր ապաստանած էր Պարթեւ յաղթուած բանակը: Փորձը՝ գիշերախառն փախուստի դիմել՝ չյաջողեցաւ. ստիպուեցաւ քաղաքը անձնատուր ըլլալ Անտիոքոսի: Պատերազմը, որուն ուրիշ մանրամասնութիւններն անձանօթ են մեզի, վերջացաւ խողաղութեան դաշինքով. որով թէեւ Արշակ Բ. պահեց իւր իշխանութիւնը, բայց կ'երեւայ թէ ստիպուեցաւ ձանձնալ մակեդոնական գերիշխանութիւնը» (Գուտշմիդ, 36—37):

Աչքի առաջ ունենալով պատերազմական անցուղարձերս, ինքնին պիտի արդարանան այն ուղղումները, զորոնք թոյլ տուինք մեզի մուծել բնագրին մէջ: Անտիոքոս (եւ ոչ Արշակ) «գնաց հանդերձ գորօք յԱրեւմտից (ոչ յԱրեւելից) երթալ ի Բարելոն (եւ ի վերին կողմանս)՝ յառաջին թագաւորացն (Սելեւկեանց) կալուածսն, զի անդ (միւսանգամ) հաստատեցէ զթագաւորութիւն իւր», զորս խլած էին Պարթեւք եւ Բաղարիայիք: «Բարելոն» հոս ընդհանուր բացատրութիւն մըն է, որ կ'ընդգրկէ իւր մէջ Սելեւկեան «վերին աշխարհները»: «Իսկ Արշակ արքայն Պարթեւաց (ոչ Անտիոքոս արքայն Ասորւոց) իրրեւ ետես զի անչափ բազմութեամբ

<sup>6</sup> Թեոսագրոց եւ Քուշանաց աղբրսի մասին տես վարդ:

եկեալ հասեալ էր ի վերայ նորա Անտիոքոս արքայն Ասորւոց (ուստի ո'չ Արշակ արքայն Պարթեւաց), այնուհետեւ ոչ կարացեալ վստահանալ յիւր զօրացն բազմութիւն՝ ի դիմի հարկանել վիրագին այնմիկ, խոյս ետ յերեսաց նորա. փախեաւ յԱսիաստան», այսինքն ի Վրկանս: Ո՛րքան համաձայն արտաքին աղբիւրներու, որոնցմէ օգտուած էր Գուտշմիդ վերոյիշեալ տողերու մէջ:

Թէ այսպէս էր Սկզբնագրին մէջ կը տեսնուի «վիրագին այնմիկ» բացատրութենէն, զոր սկզբնագիր հեղինակը գործածած է Անտիոքոսի հասցէին. նման բացատրութիւն մը անպատեհ էր կիրարկել Արշակի համար:

«Եւ թագաւորէ (Անտիոքոս) ի վերայ Ասիաստանի ամս Ե».  
կ'ուղղեմ «ի վերայ Ասորւոց եւ Ասիաստանի ամս ԼԵ»: Կրնայ կարծուիլ, թէ այս «ամս Ե» ըսուած ըլլայ Անտիոքոս Բ.ի համար, որուն թագաւորութեան տասը տարիները մինչեւ 250 յիշուած էին որուն թագաւորութեան տասը տարիները, որոնք ճշգիւ վերը. բայց լուծած էին 250—246 տարիները, որոնք ճշգիւ Ե տարի կու տան: Բայց տեղս, ուր խօսքը Անտիոքոս Գ.ի մասին է, կը պահանջէ «ԼԵ»:

5. Արշակ Գ. Փրիսպատի (191—176) եւ Արշակ Ե. Հրահատ Ա.ի (176—171) օրով աւելի կը զօրանայ Պարթեւաց պետութիւնը: Այնպէս որ Միհրդատ Ա. (171—138) կրցաւ այնուհետեւ գերիշխան իշխանութիւն բանեցնել բոլոր արեւելեան Երանի վրայ: Սա յաջողեցաւ Պարթեւաց սահմանները մինչեւ Եփրատ յառաջ մղել եւ առաւ Բարելաստանը. նաեւ Բաղարիայի մէջ գործեց նուաճումներ. եւ կ'ըսուի թէ մինչեւ Հնդկական Կաւկաս տարանուաճումներ. եւ կ'ըսուի թէ մինչեւ Հնդկաստանի մէջտեղ կ'ըսէ թէ իր ձեռքին տակն էին Ինդոսի եւ Հիւզասպէսի մէջտեղ (Որոս. Ե. 4): Յաջողութեամբ պսակուեցան իր ձեռնարկութիւնները նաեւ արեւմտեան սահմաններու վրայ: Մարաց եւ Պարթեւաց մէջ պատերազմ ծագեցաւ. եւ Պարթեւք գրաւեցին երկիրը (147ին): Միհրդատ վերակացու դրաւ հոն զԲակասիս, եւ ինքը վերադարձաւ Վրկանաց աշխարհը: Մարաստանի կորուստէն ինքնին հետեւեցաւ Բարելաստանի կորուստը, որուն Դեմետրիոսի հպատակ սատրապը սպանուեցաւ եւ Միհրդատ գրաւեց Սելեւկիա մայրաքաղաքը: Ասով Արեւելք կորսուած էր Մակեդոնացւոց համար (Գուտշմիդ, 44—52. Տաշեան, 31—32):

Պահ մը կարծես իրերը փոփոխուելու վրայ էին: Միհրդատի նոր հպատակները գոհ չէին պարթեւ իշխանութենէն. եւ թախանոր հազարներն Դեմետր Բ. Նիկատորէն օգնելու իրենց: Դեմետր իրօք 140ին Միջագետքէն Բարելոն եւ անկէ վերին սատրապութեանց կողմերն անցաւ. յաղթեց Պարթեւաց այլ եւ այլ ճակատներու մէջ. բայց ի վերջոյ Մարաց աշխարհին մէջ կրեց 139ին





նոյն իսկ բնիկ Պարթեւաստանը ինքնիշխան թողնելու համար կը պահանջուէր տարեկան հարկ: Հրահատ Բ. յանձն առաւ առաջին կէտը. արձակեց զԴեմեռետը, որպէս զի վերագառնայ Ասորիք եւ իսկ իր եղբոր գահը. կը յուսար այսպէս, թէ Անտիոքոս գահը եղբոր դէմ պաշտպանելու համար պիտի աճապարէր հեռանալ Ասիաստանէն: Բայց այս միջոցին իրերը ի նպաստ Պարթեւաց ուրիշ ընթացք առին:

Անտիոքոսի բանակը նուաճուած երկիրներու մէջ հարստահարութիւններով եւ զեղծ կեանքով դառնացուցած էր ժողովուրդները. այս պատճառով ալ Մարք գաղտնի միաբանեցան Պարթեւներու հետ. եւ նշանակուած օր մը միաբան յարձակեցան անտիոքեան ցրուած զօրամասերու վրայ: Աճապարեց Անտիոքոս ամէնէն աւելի վտանգուած տեղոյն օգնութեան հասնիլ. բայց կէս ճանապարհին իր դէմ ելաւ Հրահատ Բ. մեծ բանակով մը: Անտիոքոս հակառակ իր զօրավարներու խորհրդին՝ իրեն համար շատ անյարմար տեղ մը ճակատ յարդարեց. եւ իւր Աթենէոս զօրավարի վատթարութեամբը բոլորովին ջախջախուեցաւ իր ոյժը. ինքն ալ վերաւոր՝ չի յնալու համար թշնամիներու ձեռքը ժայռէ մը գահավէժ եղաւ:

Այս մեծ պարտութիւնը, որ ընդ միշտ վերջ տուաւ Ասորուց կողմէն սպասելիք որ եւ է վտանգի, ըստ Գուտշմիւրի, տեղի ունեցաւ 129, փետրուարին մօտաւորապէս:

Հրահատ պատուով թաղեց զԱնտիոքոս. անոր մարմինը արծաթի դագաղով ուղարկեց Ասորիք. թագաւորաբար պահեց նաեւ առաւ. իսկ անդրանիկ որդին Սելեւկոս արձակեց Ասորիք՝ հայրենի թագն առնելու (Գուտշմիւր, 75—78. Տաշեան, 35—36):

Անտիոքոսի այս արշաւանքի մասին մեր պատմական աղբիւրներն են մասնաւորապէս Յուստինոս (ԼԲ. 10) եւ Եւսեբիոս Կեսարացի, որ օգտուած է Պորփիր Տիւրացուց ժամանակագրութենէն: Յառաջ կը բերեմ այս տեղ Եւսեբեայ տողերը<sup>13</sup>. «Եւ Դեմեռետը եղբայր կրտսեր, որ կոչէր Անտիոքոս, ի Սիդէ քաղաքի բայրն Դեմեռետիոս յանցեալ եւ ի կալանս է, զնայր ի Սիդէ քաղաքէ եւ գայր ունէր զԱսորիս ձկ Ողոմպիադին ի Դ. ամին Ողոմպիադին ||||| ԺԲ բիւրու գայր հասանէր ||||| Արշակ<sup>14</sup>. եւ սա խար կամէր գործել. արձակէր զեղբայրն նորա<sup>15</sup> զԴեմեռետիոս, որ ի գերութեան էր, յԱսորիս: Բայց Անտիոքոս քանզի ձմեռն

<sup>13</sup> Եւսեբ. Բրոնիկոն, Ա., 349—350: Եւսեբեայ այս հատուածը զբեթէ ամբողջութեամբ օրինակած է Ստեփանոս Ասողիկ (էջ 30) մանր փոփոխութիւններով: Տարբերութիւնները կը նշանակեմ Աս. համաստութեամբ:  
<sup>14</sup> Աս. «Իսկ արքայն Պարթեւաց Արշակ Մեծ ԺԲ բիւրովք գայր հասանէր»:  
<sup>15</sup> Աս. զեղբայրն իւր (!):

եկն եհաս ի վերայ<sup>16</sup>, յանձուկ տեղի անկեալ ի վերայ բարբարոսացն<sup>17</sup>. եւ սաստկացուցանէր զպատերազմն. եւ<sup>18</sup> խոցեալ անկեալ մեռանէր<sup>19</sup>: ... Իսկ զնորին որդի զՍելեւկոս զեկեալ<sup>20</sup> զհետ հօրն՝ համօրէն մատաղ հասակաւ՝ ձերբակալ արարեալ<sup>21</sup> Արշակայ արքայի<sup>22</sup> տանէր գերի եւ թագաւորաբար պահէր: ... Բայց դարձեալ միւսանգամ Դեմեռետիոս յԲ. ամի ձկԲ Ողոմպիադին՝ թագաւորէր՝ զտասն ամ ի միջի ի գերիս լեալ»:

Եւսեբեայ բնագիրը թերոյթ մ'ունի հոս. ինկած են տողեր, զորոնք հարկ է լրացնել ըստ իմաստին: Դժբախտաբար այս հատուածին յոյն սկզբնաղբիւրը չէ հասած մեզի: Եւսեբեայ յառաջբերութիւնս Պորփիրի ժամանակագրութենէն այս թերակատար բնագրով ծանօթ եղած է նաեւ Մ. Սորենացուց (Բ. 2) եւ Ստեփանոս Ասողիկի (էջ 30): Այս պակասաւոր բնագիրը ձեռքի տակ ունեցած է նաեւ Սեբիոսի անծանօթ խմբագիրը 2. հատուածին մէջ, ցած է նաեւ Սեբիոսի անծանօթ խմբագիրը 2. հատուածին մէջ, որ ամբողջութեամբ անոր յաւելուածն է, կցկցած Եւսեբեայ տողերը ընդլայնելով: Այս պատճառաւ ալ վերագոյն քառակուսի փակագծի մէջ առի այս հատուածը: Կայ տեղիք կարծելու թէ իրականում մէջ առի այս հատուածը է յաւելուածս, միաժամանակ ջնջողն խմբագիրը, որ մուծած է յաւելուածս, միաժամանակ ջնջողն եղած ըլլայ Եւսեբեայ յիշեալ երկու տողերու: Պարթեւասէր խմբագիրը սքողել ուզած է հոս ալ Արշակայ պարտութիւնը: Տարբարուծենք հատածս իր մասերու մէջ:

ա. «Իբրեւ ետես Անտիոքոս եղբայր Դեմեռետայ, եթէ ըմբռնեցաւ Դեմեռետիոս ի ձեռս Արշակայ արքայի, ինքն թագաւորէ ի վերայ Ասորուց [եւ Ասիաստանի]».  
 յարասութիւնն է Եւսեբեայ տողերուն. «Եւ Դեմեռետը եղբայր կրտսեր, որ կոչէր Անտիոքոս... եւ իմացաւ թէ եղբայրն Դեմեռետիոս յանցեալ եւ ի կալանս է... եւ իմացաւ թէ եղբայրն Դեմեռետիոս յանցեալ եւ ի կալանս է... եւ իմացաւ թէ եղբայրն Դեմեռետիոս յանցեալ եւ ի կալանս է... եւ իմացաւ թէ եղբայրն Դեմեռետիոս յանցեալ եւ ի կալանս է...»:

բ. «Զօրաժողով լինի (Անտիոքոս) եւ զնայ ի Բարեւոն զկնի Ժ. ամի»:  
 Կ'ենթադրէ Եւսեբեայ այժմ զուրս ինկած տողս. «Իսկ ի Դ. ամի ձկԲ Ողոմպիադին <զօրաժողով լինէր Անտիոքոս եւ> ի Դ. ամի ձկԲ Ողոմպիադին <ի Բարեւոն...>»:

գ. «Ազդ լինի Արշակայ եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմեռետայ եւ եկն ի Բարեւոն»:  
 Կ'ենթադրէ զարձեալ Եւսեբեայ Դեմեռետայ եւ եկն ի Բարեւոն»:

<sup>16</sup> Աս. ձմեռն եկեալ հասեալ էր:  
<sup>17</sup> Աս. յանձուկ տեղիսն եկեալ ի վերայ Արշակայ զօրացն՝ սաստկացուցանէր...:  
 Մ. Սոր. Բ., 2. այս հատուածը կը համաստեմ զպատերազմն ի Պարթեւս) գայ ունի զԱսորիս: Իսկ Ար. Անտիոքայ զգնալն Արշակայ (հանդերձ Դեմեռետայ ի Պարթեւս) զայ ունի զԱսորիս: Իսկ Ար. շակայ ԺԲ բիւրու անդրէն զարձեալ. եւ Անտիոքոս ի սաստկի ձմեռացնոյն հերքեալ՝ պատահի նմա պատերազմաւ յանձուկ տեղիս, եւ կորնչի հանդերձ զօրոքն»:  
<sup>18</sup> Չունի Ազդերեան. զբեթէ համաձայն Աս.:  
<sup>19</sup> Աս. Եւ խոցեալ անկեալ եւ մեռանէր:  
<sup>20</sup> Աս. որ եկեալ էր:  
<sup>21</sup> Յօրինակին կը պակսի «ձերբակալ արարեալ».  
 Աս. ունի «կալեալ».  
 Ազդերեան կը լրացնէ «տուեալ»:  
<sup>22</sup> Յօր. Արշակ արքայ. Աս. Արշակայ:



